մինչ ցարդ՝ որով սփոփեալ անձկաւէտ սիրտք մեր՝ կամք յոգեխառնեալ ի մի յերջանկութիւն։ Գեղ վայելուչ և զուարթ բերկրութեան յիրաւի փայլին ի դէմս Սրբազնումարդ Ժողովոյս և համայն հանդիսականաց։ և որպէս զծաղկունս ի դաշտի ի ծագել արփւոյն՝ հոգենորոգ զուարթացեալ վերընձիւղեմք զհրճուանս սրտից։ իբրև զփունջս անուշահոտ ծաղկանց առ Հայրապետդ Մեծ. և բուրմունք խնկոց սրտից մերոց հանգոյն ամպոյ ելեալ դիզանան ի վեր յերկինս ի նշան գոհութեան զվերին Տեսչութենէն։ որ ի խնամս իւր ընկալեալ զՏեղին Էջման իւր՝ ցայսօր անդրդուելի պահեաց յանընդհատ յարձակմանց թշնամեաց և աշխարհաւեր արշաւանաց բարբարոսաց և կողոպտիչ հարստահարութեանց նոցին։

Զի՞նչ ուրեմն ասա՛ համախմբելոցս պարտ իցէ առնել։ եթէ ոչ՝ շնորհապարտ զանձինս խոստովանեալ առ նախախնամողն տիեզերաց՝ բարեմաղթել։ զի և յայսմհետէ անդրդուելի պահեսցէ զՀիմունս Լուսաւորչակերտ Տաճարիս փայլուն և շքեղ փառաց։ յորում որդիք Հայաստանեայց մարզեալք ի կրթութիւնս վայելուչս՝ փայլեսցին որպէս որդիք արժանիք իններտասաներորդ լուսափայլ դարու։ Իսկ զՔեզ՝ Ո՛վ Օծեալդ յԱստուծոյ Հայրապետ։ փառաւոր արասցէ երկայն աւուրբք լցուսցէ և ցուցցէ զփրկութիւն իւր»։ զի իբրև նոր իմն Մեսրովբ և Սահակ հանդիսացեալ ի միջի մերում՝ բարձրացուսցես զպատիւ և զփառս ազգի և եկեղեցւոյ մերոյ։

Ձերումդ Վեհափառութեան ամենախոնարհ որդի և նուաստագոյն միաբան Մայր - Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի

Նիկողայոս Շախեանց։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ։

Ռուս Церк. Общест. Вѣстн. լրագրում գոհութեամբ կարդում ենք «Նկարագիր Հայաստանեայց Եկեղեցւոյ ժամանակակից վարչութեան» վերնագրով հետաքրքիր յօդուածը։

Թէև յօդուածի մէջ տեղ տեղ երևումէ անհմտութիւն Հայ եկեղեցական կարգաց և պատմական իրողութեանց։ բայց ընդհանրապէս առնելով ամենայն համակրութեան արժանի է։

Վեհափառ Տ. Մակար Սրբազնագոյն Կաթուղիկոսի հաստատութիւնը առիթ ունենալով Ռուս թերթը յիշեալ յօդուածը տպելիս՝ բարի ցանկութիւն է ունեցել իւր ընթերցողներին ծանօթացնել Հայաստանեայցս եկեղեցու ժամանակակից վարչութեան հետ՝ պատմական տեսութեամբ անցելոյն։

—

«Ա. բիւր» ամսաթերթի հետ շնորհակալութեամբ ստացանք Աղբիւրի 1885 թ. Գ. պրեմնայ «Զարաճճի Արամի Արկածները» գրքոյկը։ որ փոխադրել է Ա. Սարգսեան։ Տպագրութիւնը որչափ և վայելուչ է։ սակայն լեզուն ոչ այնքան։ Ինչպէս երևումէ։ փոխադրողը լեզուի կանոնները և ոճերը շատ տեղ ղոհել է մի միայն գրքոյկը ոտանաւոր անելու համար։